ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՄԱՐԶԸ	ԼՈՌԻ
ՀԱՄԱՅՆՔԸ	ՍՊԻՏԱԿ
ԲՆԱԿԱՎԱՅՐԸ	ՔԱՐԱՁՈՐ

1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Սպիտակի տարածաշրջանի միակ գյուղն է, որը չի ունեցել իր հեռավոր անցյալը:Հիմնադրվել է 1836թ.-ին, սակայն առաջին բնակիչներն այստեղ են եկել 1865 թվականին, երբ Համզաչիման (այժմյան՝ Մարգահովիտ) գյուղից այստեղ են տեղափոխվել 6-7 ընտանիքներ: Իսկ ի՞նչն էր նրանց տեղափոխման պատճառը: Պարզվել է, որ համզաչիմանցիներն ամեն տարի իրենց անասուններին ամռանը արածեցնելու են բերել այս բուսառատ վայրը: Ամենայն հավանականությամբ եկվորները որոշել են մշտական բնակություն հաստատել այստեղ՝ ամեն անգամ գնալ-գալու փոխարեն: 1918 թվականին նրանց է միացել նաև Արևմտյան Հայաստանից գաղթած ևս մեկ ընտանիք:
Քարաձորը մինչև 1946 թվականը (ըստ այլ աղբյուրների՝ 1949թ.-ը) կոչվել է Աֆանդի (Էֆենդի), որը թուրքերենից թարգմանաբար նշանակում է պարոն: Քարաձոր է վերանվանվել 1946 կամ 1949թթ.-ին:
Գյուղը խիստ տուժել է 1988 թ.-ի Սպիտակի երկրաշարժի ժամանակ: Զոհվել է 64 մարդ, ավերվել՝ շինությունների կեսը: Այն վերակառուցվել է կալմիկական և դաղստանյան շինարարների կողմից:
Գյուղում պահպանվել է 19-րդ դարի եկեղեցի:

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Քարաձոր բնակավայրը (նախկին անվանումը՝ Էֆենդի) գտնվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակի տարածաշրջանում՝ Սպիտակ քաղաքից մոտ 2 կմ հյուսիս-արևելք, մարզկենտրոն Վանաձորից՝ 13 կմ հյուսիս-արևմուտք:
Բնակավայրը տեղակայված է Քարաձոր գետի ափին՝ ծովի մակերևույթից 1550 մ բարձրության վրա, Փամբակ-Բազում լեռնաշղթայի ստորոտում:

3.ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գյուղի ռելիեֆը լեռնային է, կլիման՝ բարեխառն: Ձմռանը ցուրտ է լինում, հաճախակի են ցրտահարությունները: Օդի ջերմաստիճանը հունվար ամսին -10-ից մինչև -15 աստիճան է, հուլիս ամսին՝ +22-ից մինչև +35: Գարնանը և աշնանը խոնավ է, ամռանը՝ երաշտ:
Վերջին տարիներին Քարաձոր բնակավայրին բնորոշ են ուժեղ քամիները և հաճախակի կրկնվող կարկտահարությունները:

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Սպիտակ
2. Բնակավայրի հեռավորությունը՝	
2.1) համայնքի կենտրոնից (կմ)	4
2.2) մայրաքաղաքից (կմ)	105
2.3) մարզկենտրոնից (կմ)	14
2.4) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	103

2.5) նախկին շրջկենտրոնից (կմ)	4
2.6) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	1
2.6) մոտակա երկաթուղային կայարանից (կմ)	—
4. Բնակավայրի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1550մ
5. Բնակավայրի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	0.16 / 16.1
6.Սահմանակից համայնքների և/կամ բնակավայրերի անվանումները	Նոր Խաչակապ, Արջիովիտ, Սպիտակ, Արևաշող
7. Բնակավայրի վարչական ղեկավարի հեռախոսահամարը	098-561-600
8. Բնակավայրում փոստային բաժանմունքի առկայությունը(այո, ոչ), քանակը	այո, 1
9.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	այո
10. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	ոչ

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2025թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	442
2. Գրանցված ծնունդների քանակը	0
2.Մահացության դեպքերի քանակը	3
3.Ամուսնությունների քանակը	2
4. Ամուսնալուծությունների քանակը	0
5. Տնային տնտեսությունների թիվը	127
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	20
7. Կենսաթոշակառուների քանակը	25
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	14

6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Գրադարանների քանակը	—
2. Արվեստի դպրոցների քանակը	—
3. Երաժշտական դպրոցների քանակը	—
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	—
5. Հանրակրթական դպրոցների քանակը	1

6. Նախնական մասնագիտական(արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	—
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	—
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	—
9. Մարզադպրոցների քանակը	—

7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	01.01.2025թ.
1. Բնակավայրի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ^2)	8282
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	—
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	87

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	01.01.2025թ.
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	1331,49
2. Բնակավայրերի հողեր (հա)	49,79
3. Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	6,22
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտներ	1,63
5. Հատուկ նշանակության	—
6. Հատուկ պահպանվող տարածքների	12,04
7. Անտառային	201,61
8. Ջրային	6,89
9.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	333
10. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	41
11. Խոզերի գլխաքանակը	113
12. Գյուղատնտեսական տեխնիկա	—
12.1 տրակտորներ (քանակը)	—
12.2 կոմբայններ (քանակը)	—
13. Գյուղացիական տնտեսությունների թիվը	102

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	1
2. Բնակավայրի գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո

3. Բնակավայրի աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	—
4. Բնակավայրում գերեզմանատան առկայությունը (այո, ոչ)	այո
5. Ներբնակավայրային ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	5
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	—
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	—
6.2 Էքսկավատորների քանակը	—
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	—
6.4 Գրեյդերների քանակը	—
6.5 Աղբատար մեքենաների քանակը	—
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	—
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	–
6.9 Ավտոաշտարակների քանակը	—
7. Բնակավայրի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	—
8. Բնակավայրի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	ոչ
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ
10. Ներբնակավայրային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ

10.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Բնակավայրում համայնքապետարանի աշխատողների թվաքանակը,	4
որից՝ 1.1 համայնքային ծառայողներ	1
2. Բնակավայրի բնակիչ ավագանու անդամների թվաքանակը	0

11. ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը (նկարագրությունը)	**Ակնկալվող լուծումը և լուծման ժամկետները**
Բնակչության սոցիալապես անապահով վիճակ	Աշխատատեղերի ստեղծում (մոտակա ժամանակներում)
Խմելու ջրի արտաքին ցանցի մաշվածություն	Խմելու ջրի խողովակաշարերի աստիճանաբար փոխարինում նորով (մոտակա ժամանակներում)
Ներբնակավայրային անբարեկարգ ճանապարհներ	Փողոց առ փողոց աստիճանաբար, հատվածական հիմնանորոգում (մոտակա ժամանակներում)

Գյուղատնտեսական տեխնիկայի բացակայություն	Գյուղատնտեսական տեխնիկական պարկի ստեղծում (մոտակա ժամանակներում)
Եկեղեցու վերակառուցում	Պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցությամբ(մոտակա ժամանակներում)